

# «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈՂՎԱԾ 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևալ բովանդակությամբ 1.3-րդ կետով.

«1.3 Նույնականացման քարտ չունենալու և այն ստանալուց հրաժարվելու բազային տրամադրելու (փոխանակելու) համար՝ ապատիվ

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ժա» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ» և «ժգ» ենթակետերով.

«ժբ) նույնականացման քարտ չունենալու և այն ստանալուց հրաժարվելու դեպքում օտարերկրյա պետություններում վավերական՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար  
«ժգ) Հայաստանի Հանրապետության քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրելու (փոխանակելու) համար

**ՀՈՂՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

